

## ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄՆԻ ԽՕՍՔ

Մօտ 15 տարի առաջ, խումբ մը ազգայիններ, անկլինադարձային որոշում մը առին, եւ իրենց նուիրատուութիւններով հաստատեցին հիմնադրամ մը, ՀՕՄ-ի Գոլովեան Նախակրթարանի եւ Պապայեան մանկապարտեզի նիւթական կարիքները մնայուն կերպով հոգալու նպատակով: Յաջորդող 10 տարուան ընթացքին այս խումբի նուիրատուութիւններով եւ իրենց կազմակերպած յատուկ ձեռնարկներու մուտքերով, գոյացած էր մօտ 225,000 տոլար:

Հիմնադրամի շահարկումէն գոյացած գումարները, որ երբեմն կը հասնէին տարեկան մինչեւ 20,000 տոլարի, ամէն տարի փոխանցուեցան դպրոցին:

Այս յաջող աշխատանքէն քաջալերուած, Հայ Կեդրոնի Վարչութիւնը որոշեց ընդարձակել զայն եւ ստեղծել նոր հիմնադրամ մը ատելի լայն տարողութեամբ: Այս հիմնադրամին նպատակն է դպրոցի նիւթական պէտքերը մատակարարելու կողքին, նաեւ օգտակար դառնալ այլ հայկական կազմակերպութիւններուն: Ընդարձակուած այս հիմնադրամին նուիրատուները կրնան որոշել թէ որ կազմակերպութիւնները պիտի նպաստաւորուին իրենց նուիրատութեան հասոյթէն:

Այսպէս, 1997-ին ծնունդ առաւ Գանատահայ Հիմնադրամը: Յարդ, անոր դրամագլուխը անցած է 1.4 միլիոն տոլարը, եւ վստահ ենք որ ապագային պիտի կրկնապատկուի եւ եռապատկուի:

Լաւատեսութեամբ է որ ձեզի կը ներկայացնենք մեր նպատակներն ու երազները: Միասնաբար կրնանք մեր կազմակերպութիւններուն ապագան նիւթական ամուր հիմերու վրայ դնել:

Կը հրաւիրենք ձեզ անդամակցելու ԳՀ-ին, անոր միջոցաւ նպաստելու ձեր նախընտրած նպատակներուն եւ գործնականօրէն մասնակցելու գաղութի ապագայի երաշխատրման եւ բարգաւաճման մեր բոլորին հետապնդած հեռանկարին:



## ԳՆԱՏԱՀԱՅ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ՄԱՍԻՆ (ԳՀ)

Գանատահայ հիմնադրամը հիմնուեցաւ 1985-ին, խումբ մը նուիրատուներու կողմէ, Հայ Կեդրոնի նախաձեռնութեամբ: Պաշտօնական գրանցումը, որպէս բարեսիրական հաստատութիւն, կատարուեցաւ 1997-ին, Գանատայի Օնթարիօ նահանգի օրէնքներուն համաձայն: Անոր միակ նպատակն է, նիւթապէս օգնել գոյութիւն ունեցող գաղութային կազմակերպութիւններուն, որոնք կը նպաստեն գաղութի կրթական, առողջական, մշակութային եւ ընկերային կարիքներուն:

### Ծրագիր եւ նպատակ

Գտնել նուիրատու անդամներ, շահարկել եւ հսկել ստեղծուած հիմնադրամներու եւ աւանդներու վրայ, եւ շահարկումէն գոյացած գումարին մէկ մասը կամ ամբողջութիւնը տրամադրել նուիրատուներու կողմէ ճշդուած բարեսիրական հաստատութիւններու: Մնայուն նիւթական աղբիւրներ պահովելով, սատարել Հայ Գաղութին ծառայող հաստատութիւններու նիւթականին ամրապնդման, երաշխաւորելու համար անոնց բարգաւաճ գործունէութիւնը:

### Համարատուութիւն

ԳՀ-ն կը կառավարուի 9 հոգիոց ընտրովի եւ անվճար մարմնի մը կողմէ: Անոր հաշուետու յանձնախումբերու անդամները, որակեալ եւ անվճար կամաւորներ են: Խնամակալ մարմինը կ'ընտրուի ԳՀ-ի նուիրատու անդամներուն կողմէ, ԳՀ-ի եւ Հայ Կեդրոնի կողմէ միասնաբար առաջարկուած թեկնածուներու ցանկէն, երեք տարուան տեւողութեան համար:

ԳՀ-ի անդամները անոր նուիրատուներն են, հետեւաբար, Մարմինը ամբողջովին հաշուետու է հիմնադրամին նուիրատու անդամներուն: ԳՀ-ն կը շեշտէ նիւթական բացարձակ համարատուութիւն եւ հոգատար վերաբերմունք հիմնադրամի գումարներուն նկատմամբ: Նիւթական տեղեկագիրը ամէն տարի կը քննուի հաշուպահական ընկերութեան մը կողմէ եւ տրամադրելի է իր անդամներուն եւ հասարակութեան:



# ԻՆՉՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԵՑԱԻ ՔՀՆ

Պարզ է թէ երբ գաղութ մը աստիճանաբար կը մեծնայ եւ կը հաստատուի, սկզբնական շրջանին, գաղութի հաւաքական ճիգերը կը կեդրոնանան հարկ եղած կազմակերպական ցանցը գոյացնելու եւ զարգացնելու վրայ, ինչպէս հիմնել կեդրոններ, դպրոցներ, եկեղեցիներ եւ այլ զանազան կազմակերպութիւններ ու մարմիններ, հոգալու համար գաղութի կարիքները:

Գաղութի մը կազմաւորման յաջորդ փուլին, առաջնահերթ կը դառնայ ապահովել հաստատուած այս կազմակերպութիւններու նիւթական կայունութիւնը եւ անոնց մատակարարած ծառայութեանց բարելաւումն ու ընդարձակումը:

Գաղութի մը կարիքներուն համար, գործող կազմակերպութիւնները մնայուն եկամուտներով օժտելու զաղափարը նոր չէ, եւ Սփիւռքի գաղութներու երկար պատմութեան մէջ, յաջողած գաղութներու յատկանիշն է:

ՔՀ-ն հաստատուեցաւ որպէսզի աստիճանաբար շեշտը նուազի աւանդական եւ հերթական հանգանակութիւններու վրայ վստահելէ, եւ ժամանակի ընթացքին գոյանան մնայուն հիմնադրամներ եւ աւանդներ որոնց արհեստավարժ շահարկումով ապահովուի մեր կենսունակ գաղութի ապագան:

Շահարկման մօտեցումը միշտ ծրագրուած պիտի ըլլայ պահպանելու հիմնադրամի դրամագլուխը, եւ անոր աստիճանական աճը:

## ՔՀ-ի Կառոյցը

ՔՀ-ի կազմակերպական կառոյցը մասնաւոր ուշադրութեամբ մշակուած եւ ձեւաւորուած է որպէսզի նուիրատու անհատներուն կամ ընտանիքներուն թոյլատրէ.-

- Որպէս հիմնադրամի նուիրատու անդամներ, գործօն մասնակցութիւն բերել ՔՀ-ին:
- Գոհունակութիւնը ունենալ, իմաստալից նուիրատութեամբ մը ֆոնտ մը հաստատելու, իրենց նախընտրած նպատակին կամ կազմակերպութեան օգնելու:
- Վստահութեամբ ներշնչուիմ, թէ ֆոնտերու գումարումով գոյացած պատկառելի գումարները կը կառավարուին պատշաճ եւ արհեստավարժ կերպով:
- Առաւելութիւնը ունենան, ժամանակի ընթացքին, յաջորդական նուիրատութիւններով աճեցնել դրամագլուխը, հետեւաբար ծաւալելով անոր բերած նպաստը:
- Ընտանեկան անունը ստանայ պատշաճ ճանաչում, որպէս նուիրատու եւ բարերար:



# ԻՆՉՊԷՍ ԿՐՆԱՔ ԱՆԴԱՄ ԳԱՌՆԱԼ ԳՀ-ԻՆ

Կը հրախրենք ձեզ անդամակցելու ԳՀ-ին, անոր միջոցաւ նպաստելու ձեր նախընտրած նպատակներուն եւ գործնականօրէն մասնակցելու զաղոթի ապագայի երաշխաւորման եւ բարգաւաճման, մեր բոլորին հետապնդած հեռանակարին:

Ձեր ընտանեկան ֆոնտը կարելի է հաստատել զանազան ձեւերով. լաւագոյնս յարմարելու համար ձեր նիւթական պայմաններուն եւ առաւելապէս օգտուելու համար տուրքէ զերծ կացուցման արտօսելի օրէնքներէն, կապ պահեցէք հիմնադրամի Խնամակալ Մարմնի անդամներէն մէկուն հետ:

Ծրագրուած նուիրատուութիւնները, նուիրատուին կողմէ, զգացական իր իմաստէն անդին գիտակցական միջոցառումներ են, հետեւաբար նման որոնումներէ առաջ միշտ փափաքելի է խորհրդակցիլ հիմնադրամի Խնամակալ Մարմնի անդամներուն հետ:

Բոլոր նուիրատուներու անունները կը հրապարակուին հիմնադրամի տարեկան տեղեկագրին մէջ, որպէս ընտանեկան ֆոնտեր, նուիրատուի մակամունով:

Ֆոնտերու դրամագլուխը միշտ կը պահպանուի, սակայն անոնց շահարկումով յառաջացած հասոյթը կը տրամադրուի նուիրատուի նախասիրած կազմակերպութեան եւ կը գործածուի նուիրատուի փափաքին համաձայն:

## Պարգեւներ (Endowments), Աւանդներ (Trusts) եւ Նուիրատուութիւններ

Հիմնադրամին մասնակցութիւնը դիրացնելու համար, ԳՀ-ն, հաւանական նուիրատուներուն կու տայ զանազան կարելիութիւններ մասնակցելու մայր ֆոնտի մը կամ հաստատելու առանձին ընտանեկան ֆոնտեր կամ աւանդներ, ըստ նուիրատուներու նախասիրութեան, նպատակներուն կամ նիւթական պայմաններուն:

Պարգեւներ հաստատելու համար նուիրատուն կրնայ մասնակցիլ նուիրելով կանխիկ դրամ, բաժնետիրութիւն եւ կամ որեւէ ստացուածքի շահաբաժին:

Հետեւեալը ամփոփ նկարագրական մըն է պարգեւի եւ կամ աւանդի ձեւով ֆոնտեր հաստատելու պայմաններուն եւ հետեւանքներուն մասին:



**1.Պարզ նուիրատուութիւններ,** (1000 տոլարէ նուազ) - նուիրատուն կը ստանայ տուրքէ զերծ ստացագիր, նուիրատուութեան գումարին համարժէք: Նուիրուած գումարը կը հատկացուի պատշաճ նպատակներու, ֆոնտի մարմնի հայեցողութեան համաձայն:

**2.Պարզեւնէր,** (1000 տոլար եւ աւելի) – նուիրատուութիւնը կը նայ ներառուիլ զոյութիւն ունեցող ֆոնտերէն մէկուն մէջ, նուիրատուի գրատր համաձայնութեամբ: Նուիրատուն կը ստանայ տուրքէ զերծ ստացագիր, նուիրատուութեան գումարին համարժէք: Նուիրատուութեան դրամագլուխը կը պահպանուի եւ շահարկման հասոյթը կը յատկացուի որոշեալ ֆոնտի նպատակներուն:

**3.Ընտանեկան Պարզեւնէր,**(25,000 տոլարէ աւելի) – նուիրատուութիւնը կը նայ ներառուիլ զոյութիւն ունեցող ֆոնտերէն մէկուն մէջ, նուիրատուի գրատր համաձայնութեամբ: Նուիրատուն կը ստանայ տուրքէ զերծ ստացագիր, նուիրատուութեան գումարին համարժէք: Նուիրատուութեան դրամագլուխը կը պահպանուի եւ շահարկման հասոյթը կը յատկացուի որոշեալ ֆոնտի նպատակներուն, կամ ֆոնտի մարմնին հետ համաձայնաբար, նուիրատուն կը նայ ճշդել որ շահարկման հասոյթը յատկացուի ֆոնտի նպատակներուն հետ համընկնող նպատակի մը: Նուիրատուութիւնը կ'արձանագրուի Գ-Հ-ի տարեկան տեղեկագրին մէջ, նուիրատուի մականունով, որպէս ընտանեկան պարզեւնէր:

**4.Առանձնապէս կառավարուած Պարզեւնէր,** (50,000 տոլար կամ աւելի) - ֆոնտը կը ստանայ ընտանեկան որակումը վերեւ նկարագրուած պայմաններով, սակայն, նուիրատուն կը նայ խնդրել ֆոնտի անկախ տնօրինումը, սահմանելով շահարկման ձեւը: Սահմանումները պէտք է ընդունելի ըլլան Տնօրէն Մարմնին:

**5.Աւանդներ,** (առնուազն 50,000 տոլար)- Աւանդ մը կարելի է հաստատել անհատի մը կամ կազմակերպութեան մը նախաձեռնութեամբ: Նուիրատուն Գ-Հ-ին կը փոխանցէ գումար մը կամ ստացուածք մը, որ կը շահարկուի Խնամակալ Մարմնի կողմէ:

Աւանդի դրամագլուխին օրինական տէրը կը մնայ նուիրատուն, եւ կը նայ իրեն վերադարձուիլ իր փափաքով, յարգելով իր եւ Գ-Հ-ի միջեւ համաձայնուած պայմանները: Նուիրատուն կը ստանայ տուրքէ զերծ ստացագիր, միայն աւանդի տարեկան շահարկման հասոյթին համարժէք, որ կը գործածուի ճշդումը նպատակներու համար:

Աւանդը կ'արձանագրուի Գ-Հ-ի տարեկան տեղեկագրին մէջ, որպէս ընտանեկան կամ կազմակերպական աւանդ:

